

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446



Նոյեմբերի 29-ը Հայաստանի երկրորդ Հանրապետության Պանծալի Պատմության սկիզբն է

Այս համարում

Չայերեն բաժին

1- Հայաստան.....	1
2- Իրանահայ Համայնք.....	3
3- Արցախ.....	7
4- Արեւմտյան Հայաստան.....	9
5- Միջազգային.....	15
6- Մշակույթ.....	19
7- Խոհեր.....	23
8- Գծանկարչություն.....	24
9- Հայերեն-պարսկերեն առածանի.....	24

Պարսկերեն բաժին

1- Լուրեր.....	1-2
----------------	-----

Ճապիկի առաջին էջում՝ Իս. Հայաստանի 93-ամյակը

Վերջին էջում՝ Լույս է տեսել Էդ. Բաղդասարյանի «Հայ Պետականության Պատմություն»-ը 7 հատորով Իրանահայ Համայնքի Ամբողջական Պատմությունը 10 հատորով

Համար 181, նոյմբեր 2013 թ.

No. 181, November 2013

ماهنامه لویس - شماره ۱۸۱ آبان ماه ۱۳۹۲

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատվածաճառ - 5000 ռիալ

Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին: Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

Խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում

Հայաստանի առաջին Հանրապետության Սիմոն Վրացյանի վերջին կառավարության հրաժարականով նոյեմբերի 29-ին Հայաստանը հռչակվեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:



ՀԽՍՀ պետական դրոշմ ու գերբը

ՀԽՍՀ պետական զինանշան

1920 թվականի աշնանը Հայաստանի Հանրապետության վիճակը խիստ ծանրացավ: Թուրք-հայկական պատերազմի հետևանքով երկրում առաջացավ սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամ: Հատկապես ծանրացավ գաղթականների վիակը: Իսկ ընդհանրապես հանրապետության բնակչության վրա կախված էր սովի սպառնալիքը:

Նման ծանր պայմաններում հայ բոլշևիկները պայքար ծավալեցին Հայաստանը խորհրդայնացնելու համար: Հայ բոլշևիկների գործունեության համար խթան հանդիսացան հատկապես 1920 թվականի սեպտեմբերին Բաքվում տեղի ունեցած Արևելքի ժողովուրդների համագումարը: Էնվերի և հայաստաց այլ գործիչների ղեկավարությամբ ընթացող այս համագումարը բացահայտ հակահայկական դիրքորոշում ընդունեց, չնայած այն բանին, որ այդ համագումարին մասնակցում էին 157 հայեր: Հայաստանի խորհրդայնացման քաղաքականությանը գործնական հողի վրա դրվեց 1920 թվականի սեպտեմբերին Բաքվում տեղի ունեցած ՌԿԲԿ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի կոմկուսի քաղբյուրոյի համատեղ նիստ, Հայաստանի կոմկուսի կենտկոմի և նրա Արտասահմանյան բյուրոյի անդամների մասնակցությամբ, ուր քննարկվեց Հայաստանի խորհրդայնացման հարցը: Իսկ 1920 թվականի նոյեմբերի կեսերին հայ կոմկուսի կենտկոմի և նրա Արտասահմանյան բյուրոյի անդամներից ստեղծվում է Հայաստանի ռազմաօկուպացիոն կոմիտե, որի մեջ մտնում էին Սարգիս Կասյանը (նախագահ), Ասքանազ Մռավյանը, Սահակ Տեր-Գաբրիելյանը, Ալեքսանդր Բեկզադյանը, Ավիս Նուրիջանյանը և ուրշներ: Շուտով Հայ հեղկոմը և Հայ կոմկուսի կենտկոմը փոխադրվում են Ղազախ և նախապատրաստական աշխատանքներ են սկսվում Հայաստանի խորհրդայնացման համար:

1920 թվականի նոյեմբերին Հայաստանի Հանրապետության վիճակը խիստ ծանրացավ, դա հարկադրեց Համո Օհանջանյանի գլխավորած կառավարության հրաժարականը: Նոյեմբերի 24-ին Հայաստանի խորհրդարանը ստեղծում է նոր կառավարություն Սիմոն Վրացյանի գլխավորությամբ: Զգալով պահի լրջությունը և հայ ժողովրդի գլխին կախված ֆիզիկական բնաջնջման վտանգը, Վրացյանի կառավարությունը փորձում է բարելավել հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ:

ՀԽՍՀ-ի Պետական Օրհներգը

Սակայն նոյեմբերի 29-ին Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանին արված առաջարկը չի ընդունվում: Լեգրանը հայտարարում է, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Հայաստանի խորհրդայնացման կուրս է վերցրել: Նույն օրը հայ հեղկումը Ղազախից անցնում է Իջևան և այստեղ Հայաստանի ժողովրդին ուղղված դեկլարացիա հրատարակում, որով Հայաստանը հռչակվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Իջևան են մտնում հայկական հատուկ ապստամբական գունդը և 11-րդ բանակի սրող զորամասեր: Նոյեմբերի 20-ին Լեգրանը Հայաստանի Հանրապետության կառավարությունից վերջնագիր ձևով պահանջում է իշխանությունը հանձնել հայ բոլշևիկներին: Եվ հայտնվելով թուրքական և ռուսական սվինների արանքում, Հայաստանի Հանրապետությունը հարկադրված է լինում տեղի տալ: Նույն օրը նրա ներկայացուցիչներ Դրոն և Համբարձում Տերտեյանը բանակցություններ են սկսում Լեգրանի հետ: Երկու օր տևած բանակցություններն ավարտվում են դեկտեմբերի 2-ին կնքված Երևանի հայ-ռուսական համաձայնագրով:

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Պետական օրհներգը 1944 - 1991 թթ. Երաժշտության հեղինակ՝ Արամ Խաչատրյան:

Բառերի հեղինակ՝ Մարմեն (Արմենակ Մարգարյան): Ստեղծվել է 1944 թվականին:



Պայմանագրի կետերի համաձայն՝

I. Հայաստանը հռչակվում էր Խորհրդային Սոցիալիստական հանրապետություն:

II. Նախքան Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը իշխանությունը անցնում էր ժամանակավոր հեղափոխական կոմիտեի ձեռքը:

III. Խորհրդային Ռուսաստանը Հայաստանի հանրապետության անբաժանելի մաս էր ճանաչում ամբողջ Երևանի նահանգը, Զանգեզուրը, Կարսի նահանգի մի մասը, Ղազախի գավառի որոշ շրջաններ և Թիֆլիսի նահանգի այն տարածքները, որոնք մինչև 1920 թվականի սեպտեմբերի 28-ը գտնվել են Հայաստանի Հանրապետության կազմում:

IV. Պատասխանատվությունից ազատվում էին Հայաստանի Հանրապետության բանակի սպայական կազմը:

V. Պատասխանատվությունից ազատվում էին Հայաստանի Հանրապետության հայ քաղաքական կուսակցությունների գործիչները:

VI. Ժամանակավոր հեղկումի կազմը պետք է բաղկացած լիներ 5 բոլշևիկներից և երկու ձախ դաշնակցականներից:

VII. Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը պարտավորվում էր ապահովել ՀԽՍՀ-ի տարածքի անվտանգությունը:

Տեքստ

Սովետական ազատ աշխարհի Հայաստան, Բազում դարեր դաժան ճամփա դու անցար, Քաջ որդիք քո մաքառեցին քեզ համար, Որ դառնաս դու մայր հայրենիք հայության:

Կրկներգ:

Փառք քեզ, միշտ փառք, Սովետական Հայաստան, Աշխատասեր, ճարտարագործ-շինարար, Ժողովրդոց սուրբ դաշինքով անսասան՝ Դու ծաղկում ես և կերտում լույս ապագայ:

Լենինն անմահ մեզ հուրն անշեջ պարզևեց, Մեր դեմ շողաց երջանկաբեր այգաբաց, Հոկտեմբերը կործանումից մեզ փրկեց եվ տվեց մեզ նոր, պայծառ կյանք փառապանծ:

Կրկներգ

Մե՞ծ Ռուսիան մեզ եղբայրության ձեռք մեկնեց, Մենք կերտեցինք ամրակուռ նոր պետություն, Լենինյան մեր կուսակցությունն իմաստուն Հաղթորեն մեզ դեպ կոմունիզմ է տանում:

Կրկներգ

ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղարները



Ալեքսանդր Միասնիկյան

- Գևորգ Սարգսի Ալիխանյան (1920-1921)
- Սարգիս Ղուկասի Լուկաշին /Սրապիոնյան/ (1921-01.02.1922)
- Աշոտ Գարեգինի Հովհաննիսյան (1922-1927)
- Հայկ Ալեքսանդրի Հովսեփյան (1927-1928)
- Հայկազ Արշակի Կոստանյան (1928-1930)
- Աղասի Ղևոնդի Խանջյան (1930-10.07.1936)
- Ամատունի Միմոնի Վարդապետյան (1936-1937)
- Գրիգոր Արտեմի Հարությունյան (1937-1953)
- Սուրեն Հակոբի Թովմասյան (1953-1960)
- Յակով Եփրեմի Զարոբյան (1960-1966)
- Անտոն Երվանդի Քոչինյան (1966-1974)
- Կարեն Սերոբի Դեմիրճյան (1974-1988)
- Սուրեն Գուրգենի Հարությունյան (1988-1990)
- Վլադիմիր Միհրանի Մովսիսյան (1990)
- Ստեփան Կարապետի Պողոսյան (1990-1991)
- Արամ Գասպարի Սարգսյան (1991)

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահներ (1920-1921 թթ.՝ ՀԽՍՀ Ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ, 1921-1938 թթ.՝ ՀԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահներ)

- Սարգիս Հովհաննեսի Կասյան (29.11.1920-1921)
- Ալեքսանդր Թեոդորոսի Մյասնիկյան (1921-1922)
- Սարգիս Մահակի Համբարձումյան (1922-1925)
- Արտաշես Բալասաի Կարինյան (1925-1928)
- Արմեն Արտեմի Անանյան (1930-1933)
- Սերգո Նիկոլայի Մարտիկյան (1933-1936)
- Գևորգ Սարիբեկի Հանեսոյան (1936-1937)
- Մացակ Պետրոսի Պասյան (1937-1938 և 1938-1954)
- Խաչիկ Միսակի Հակոբջանյան (1938)
- Շմավոն Մինասի Առուշանյան (1954-1963)
- Նագուշ Խաչատուրի Հարությունյան (1963-1975)
- Բաբկեն Եսայու Սարկիսով (1975-1985)
- Հրանտ Մուշեղի Ոսկանյան (1985-1990)
- Լևոն Հակոբի Տեր-Պետրոսյան (1990-1991)

ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահներ (1921-1946 թթ.՝ ՀԽՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահներ)

- Ալեքսանդր Թեոդորոսի Մյասնիկյան (01.01.1921-30.01.1922)
- Սարգիս Ղուկասի Լուկաշին /Սրապիոնյան/ (01.02.1922-30.01.1925)
- Սարգիս Մահակի Համբարձումյան (01.02.1925-30.01.1928)
- Մահակ Միրզոյի Տեր-Գաբրիելյան (01.02.1928-30.01.1935)
- Աբրահամ Աբրահամի Գուրյան (01.02.1935-30.01.1937)
- Արամ Սերգեյի Փիրուզյան (01.02.1937-30.01.1943)
- Աղասի Սողոմոնի Սարգսյան (01.02.1943-30.01.1947)
- Մահակ Կարապետի Կարապետյան (01.02.1947-30.01.1952)
- Անտոն Երվանդի Քոչինյան (01.02.1952-30.01.1966)
- Բաղալ Հմայակի Մուրադյան (01.02.1966-30.01.1971)
- Գրիգոր Աղաֆոնի Արզումանյան (01.02.1972-30.01.1976)
- Ֆադեյ Տաճատի Սարգսյան (01.02.1977-30.01.1989)
- Վլադիմիր Միքայելի Սարգսյանց (01.02.1989-01.06.1990)
- Վազգեն Միքայելի Մանուկյան (01.06.1990-20.09.1991)

Աղբբեջանցիներից իր տունը պաշտպանող 106-ամյա հայ կնոջ լուսանկարը հայտնվել է թուրքական մամուլում

Նոյեմբեր 02, 2013

Թուրքական մամուլում է հայտնվել ամերիկացի լրագրող Արթուր Բրիսբանի «Մի լուսանկարը հավասար է հազարավոր բառերի» պատմական լուսանկարների շարքը: Թուրքական հայտնի լրատվամիջոցների մի մասը այդ ֆոտոշարքում ընդգրկված «106 տարեկան հայ կինը պաշտպանում է իր տունը» լուսանկարի գրությունը դարձրել են «106 տարեկան կինը պաշտպանում է իր



տունը», իսկ մի մասն էլ թողել «հայ» կինը բառը: Նշենք, որ հիշյալ լուսանկարն արվել է Արցախում, 1990 թվականին:

Իրանահայ Համայնք

Վախճանվել է Թեհրանի ՀԹ Պատգամավորական Ժողովի անդամ Ալբերտ Քոչարյանը



Այսօր՝ հոկտեմբերի 9-ի կեսօրին, հետ երկարատև հիվանդության, վաղաժամ կյանքից հեռացավ Թեհրանի հայոց թեմի Պատգամավորական Ժողովի, գործույթա եւ աշխույժ, 13 տարիների պատգամավոր Ալբերտ Քոչարյանը:

Նա ծնվել էր 1967թ., Իրանի մայրաքաղաք՝ Թեհրանի հայաբնակ Մաջիդիե (Ջեյթուն)քաղաքամասում: Նախնական կրթությունը ստացել էր հայոց ազգային դպրոցներում, ապա բարձրագույնը շարունակել Թեհրանի «Էլմ-Օ-Սանաթ» համալսարանի էլեկտրական ճարտարագիտության ֆակուլտետում՝ ստանալով էլեկտրոէներգիա ճյուղի լիսանս:

Հինգ տարի աշխատել է ԻԻՀ Գիտությունների նախարարության Էներգիաների հետազոտությունների կենտրոնում, իսկ վերջին 14տարին՝ Էներգետիկայի նախարարության ենթակա Գիտահետազոտական եւ ճարտարագիտական «Սոշանիք» կենտրոններում:

Ալբերտ Քոչարյանը Էներգիայի խնայողության և ղեկավարման մասնագետ էր եւ այդբնագավառում հանդես է եկել բազմաթիվ գիտական հոդվածներով եւ իրագործել նախագծեր:

Նա Իրան-Հայաստան Բարեկամության Միության հիմնադիր անդամներից էր:

1986 թ.-ից անդամակցել է Հայ համալսարանականների ընդհանուր միության, ուր 6տարի վարչության անդամ է եղել, 2 տարի՝ նախագահ: Անդամակցել է նաեւ ՀՄՄ

«Նաիրի» միության՝ երկու շրջան վարչության անդամ եւ հիմնադիրներից է եղել նույն միության Ուսանողական բաժանմունքի:

2006 թ.-ից Մաջիդիե քաղաքամասի Թաղային խորհրդի անդամ է եղել՝ մի քանի շրջան ստանձնել ատենապետի պաշտոնը:

2000 թ.-ից, չորս շրջան անընդմեջ, Ջեյթուն քաղաքամասի հայ բնակչության կողմից ընտրվել է որպես ԹՀԹ Պատգամավորական Ժողովի պատգամավոր: 2009թ. անդամակցել է ՊԾ Կազմակերպչական հանձնաժողովին: Նրա հիմնական կարգախոսն էր Մտածե՛նք անկախ, Խոսե՛նք ճշմարիտ, Գործե՛նք արդար...

Նա մեծ պատասխանատվությամբ էր վերաբերվում Ժողովրդի կողմից իրեն տրված ձայնի նկատմամբ, այդ մասին նա իմասնավորի շեշտում էր իր վերջին ասույխում, որը կիրառարակենք մոտ ապագայում:

Ալբերտ Քոչարյանի վաղահաս եւ տխուր կորստի առիթով մեր խորագգաց ցավակցությունն ենք հայտնում հանգուցյալի հորը՝ Թեվան Քոչարյանին, նրա հարազատներին, բարեկամներին ու ընկերներին, Ջեյթուն քաղաքամասի եւ ինչու չէ նաեւ Թեհրանի ողջ հայության՝ ազնիվ զավակ, սիրելի բարեկամ, հարազտ ընկեր, աշխույժ գործընկեր ու պատգամավոր կորցնելու համար:

«Լույսի» խմբագրությունը խորապես ցավակցում է սիրելի Ալբերտի վախճանման կապակցությամբ:

Շայաստան

Գրողների միությունը Նոր նախագահ ունի



20 Հոկտեմբերի 2013

«Ամենապայծառ ուղեղները, ամենապայծառ մտքերը համագումարի ընթացքում կարող են հիասթափվել», - ՀԳՄ համագումարից հետո կայացած ընտրությունների ընթացքում ասաց Արքմենիկ Նիկողոսյանը: Ընտրությունների արդյունքում պարզ դարձավ ՀԳՄ նոր նախագահի անունը՝ Էդվարդ Միլիտոնյան, որն առավելագույն ձայներն էր հավաքել:

Թուրքիա մեկնող հայաստանցիների թիվն աճում է



Նոյեմբեր 07, 2013

Թուրքիա մեկնած Հայաստանի քաղաքացիների թիվը 2013 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 56 177 մարդ:

Ինչպես NEWS.am-ը տեղեկանում է Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարությունից, 2013 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում Թուրքիա մեկնած հայաստանցիների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 4 տոկոսով կամ 2142-ով:

Միայն 2013-ի սեպտեմբերին Թուրքիա է այցելել 7 345 հայաստանցի:

Նշենք, որ 2012-ի ընթացքում Թուրքիա այցելած հայաստանցիների թիվը կազմել է 70 956:

Հայաստանի զինված ուժերի տեսչական խումբը հայտարարված վայրերի տեսչություններ է անցկացնում Թուրքիայի տարածքում



Նոյեմբեր 06, 2013

Եվրոպայում սովորական զինված ուժերի (ԵՍՁՈՒ) մասին պայմանագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի տեսչական խմբի

կողմից Թուրքիայի Հանրապետության տարածքում նոյեմբերի 5-ից 12-ը անցկացվում են հայտարարված վայրերի տեսչություններ:

ՊՆ մամուլի ծառայությունից հայտնում են, թե մեկ այցի ընթացքում կիրականացվեն երկու տեսչություններ՝ համաձայն ԵՍՁՈՒ պայմանագրի «Տեսչություններ» արձանագրության 17 կետի:

Տեսչության առարկաներն են (հսկողության օբյեկտներ)՝ Թուրքիայի Հանրապետության ՁՈՒ 3-րդ դաշտային բանակի 9-րդ բանակային կորպուսի Արդահանում եւ Մարիդամիշում տեղակայված բրիգադները:

Տեսչության ընթացքում կստուգվեն պայմանագրով սահմանափակվող տեխնիկայի եւ սպառազինության (մարտական տանկեր, մարտական զրահապատ մեքենաներ, հրետանի) քանակը եւ դրանց առկայությունը հսկողության օբյեկտներում:

Հայ-իրանական հարաբերությունները գտնվում են բարձր մակարդակի վրա

13:27 09.10.2013



Ժնևում անցկացվող Միջխորհրդարանական միության 129-րդ վեհաժողովի շրջանակներում ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը հանդիպում ունեցավ ԻԻՀ Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի հետ: Հանդիպման ժամանակ, որն անցավ ջերմ մթնոլորտում, Հովիկ Աբրահամյանը եւ Ալի Լարիջանին փաստեցին, որ հայ-իրանական հարաբերությունները գտնվում են բարձր մակարդակի վրա եւ շարունակում են զարգանալ փոխվստահության մթնոլորտում, ինչին նպաստում է նաեւ երկու երկրների խորհրդարանների համագործակցությունը:

Երկուստեք կարեւորվեց բարեկամության պատգամավորական խմբերի գործունեությունը, որոնց ակտիվ շփումները եւ փոխգործակցությունը նպաստում են միջխորհրդարանական կապերի սերտացմանը: Կողմերը կարեւորեցին տնտեսական հարաբերությունների հետագա խորացման անհրաժեշտությունը: Անդրադառնալով տարածաշրջանային խնդիրներին՝ Հայաստանի եւ Իրանի խորհրդարանների ղեկավարները շեշտեցին, որ տարածաշրջանային անվտանգության եւ կայունության համար հակամարտությունները պետք է լուծվեն խաղաղ, բանակցային ճանապարհով: Հանդիպման ընթացքում քննարկվեցին փոխադարձ հետաքրքրությունն ներկայացնող այլ հարցեր եւս:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի և Լեռնային Ղարաբաղի անկախության հարցը ԵՀԽ համաժողովին

08/11/2013 09:42:00 Oratert News Portal



Հարավային Կորեայի Բուսան քաղաքում ընթացող Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 10-րդ համաժողովին քննարկվեցին և որդեգրվեցին մի շարք բանաձևեր:

Նոյեմբերի 6-ի նիստում «Պետականազուրկ ժողովուրդների իրավունքի մասին» հայտարարության քննարկման ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատվիրակության կողմից բարձրացվեց Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ու անկախ ապրելու իրավունքի պաշտպանության հարցը: Պատվիրակությունը կոչ արեց ԵՀԽ-ին դատապարտելու այս հարցի առնչությամբ աշխարհում կիրառվող երկակի չափանիշները:

Նոյեմբերի 6-ի կեսօրի նիստում տեղի ունեցավ նաև ԵՀԽ Կենտրոնական կոմիտեի ընտրությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսության երկու պատվիրակներ Ս. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը և Փոլա Տեր-Մաթոյանը վերընտրվեցին ԵՀԽ Կենտրոնական կոմիտեի անդամ ևս ութ տարով: Ս. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը միաձայն ընտրվեց Գործադիր կոմիտեի ընտրական հանձնախմբի ղեկավար:

Նոյեմբերի 8-ին 10:55ին համաժողովի շուրջ 345 եկեղեցիների 300 պատվիրակներն Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով ընդունեցին հատուկ բանաձևը, որն արդյունքն էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի պաշտոնական դիմումների, ինչպես նաև ԵՀԽ Կենտրոնական և գործադիր կոմիտեներում Հայ Եկեղեցու նվիրակների հետևողական աշխատանքի:

Հայոց Ցեղասպանության 100-ամյակի առթիվ ընդունված բանաձևը ուղղորդում է ԵԿԶ-ի Գլխավոր քարտուղարությանը դեպի՝

2015 թ. ապրիլի 24-ի շրջանին Ժնևում կազմակերպել միջազգային կոնֆերանս Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անդամ Եկեղեցիների, միջազգային զանազան կազմակերպությունների, իրավաբանների, իրավապաշտպանների մասնակցությամբ:

Սույն միջազգային կոնֆերանսին զուգընթաց կազմակերպել միջեկեղեցական աղոթք Ժնևի Մայր տաճարում:

Միջազգային կոնֆերանսի օրերին հրավեր ուղղել աշխարհի բոլոր Եկեղեցիներին՝ աղոթել հայոց նահատակների համար:

Բանաձևը, որ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ վերահաստատեց 1983 թ.-ին ընդունված ԵՀԽ դիրքորոշումը, նշանակալի ձեռքբերում էր Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը և Կանադայի ՄԻԹ-ը ստորագրեցին Փոխըմբռման հուշագիր



Նոյեմբերի 7-ին կանադական Վիննիպեգ քաղաքում տեղի ունեցավ Կանադայի մարդու իրավունքների թանգարանի (ԿՄԻԹ) և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի (ՀՅԹԻ) միջև Փոխըմբռման հուշագրի ստորագրման հանդիսավոր արարողությունը:

Ձորյան ինստիտուտի գործուն մասնակցությամբ ստորագրված այս Փոխըմբռման պայմանագրով կողմերը պայմանավորվեցին համագործակցել Հայոց ցեղասպանության ուսումնասիրման, գրախրատարակչության, կրթության, համատեղ ցուցադրությունների կազմակերպման, տեղեկատվության, խորհրդատվության փոխանակման և այլ ոլորտներում: Այս համագործակցությունն օգտակար է նաև փորձի փոխանակման տեսանկյունից, ինչպես օրինակ երկու հաստատությունների նոր մշտական ցուցադրությունների մշակումը:

Պայմանագիրը ստորագրեցին ՀՅԹԻ տնօրեն Հայկ Դեմոյանը և ԿՄԻԹ-ի տնօրեն Ստյուարտ Մյուրեն (Stuart Murray): Ստորագրման արարողությանը ներկա էին Կանադայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Եգանյանը, Ձորյան ինստիտուտի նախագահ Գուրգեն Սարգսյանը, կանադահայ համայնքի ներկայացուցիչներ: Պարոն Ստյուարտ Մյուրեն նշեց. «Հարգանք մարդու իրավունքների նկատմամբ դժվար է կառուցել, սակայն հեշտ ոչնչացնել: Մարդու իրավունքներն ընդունող

յուրաքանչյուր հասարակություն պետք է շարունակաբար աչալքջորեն խթանի և պաշտպանի այդ մարդկանց իրավունքները,- և ավելացրել. «Մեզ համար շատ հաճելի է միացնել մեր ձեռքերը Հայոց ցեղասպանության թանգարան – ինստիտուտի հետ՝ խթանելու կրթությանը, իրազեկմանը և մարդու իրավունքների շուրջ երկխոսությանը»: Իսկ ՀՅԹԻ տնօրեն Հայկ Դեմոյանն իր խոսքում կարևորեց շեշտել. «Հայոց ցեղասպանությունը մարդու իրավունքների շատ կարևոր պատմություն է: Մարդկության դեմ հանցագործության հասկացությունն առաջացել է ի պատասխան հայ ժողովրդի դեմ իրականացրած մի շարք սարսափելի խախտումների: Այս համագործակցությունը կօգնի Հայոց ցեղասպանության պատմությունը հասցնել ավելի լայն լսարանի՝ ի շահ եկող սերունդների»: Կանադայի մարդու իրավունքների թանգարանի հանդիսավոր բացումը նախատեսվում է 2014 թ. սեպտեմբերին: Երկու կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին նաև 2015թ. ՄԻԿԹ-ում Հայոց ցեղասպանությանը նվիրված ժամանակավոր ցուցադրության կազմակերպման շուրջ: Կանադա կատարած այցի շրջանակներում ՀՅԹԻ տնօրեն Հ. Դեմոյանը հանդիպումներ ունեցավ Տորոնտոյի և Մոնրեալի հայ համայնքների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվեց Հայոց ցեղասպանության հարյուրամյակի կապակցությամբ համատեղ միջոցառումներ անցկացնելու և ընդհանուր ազգամտավորություն մշակելու հարցեր:

ՄՄ անդամակցությունը կհանգեցնի Հայաստան ներկրվող ապրանքների գների կտրուկ բարձրացման



Նոյեմբեր 12, 2013

Հայաստանի առաջիկա անդամակցությունը Մաքսային Միությանը(ՄՄ) ըստ էության նշանակում է հրաժարում սակագնային լիբերալ քաղաքականությունից ու անցում ՄՄ առանձին անդամների համար հովանավորչական քաղաքականության: Պարզաբանենք կարելուրագույն աննդամաթերթի՝ շաքարավազի օրինակի հիման վրա, որը մեծ քանակությամբ ներկրվում է Հայաստան երրորդ երկրներից:

I կիսամյակում Հայաստանը ներկրել է ավելի քան 27,2 հազար տոննա շաքարավազ ավելի քան 571 դոլար մեկ տոննայի դիմաց մաքսային արժեքով: Ընդ որում առյուծի

բաժինը պատկանում է Բրազիլիային(90.6 տոկոս)՝ 549 դոլար մեկ տոննայի դիմաց մաքսային արժեքով ու մեր ցամաքային հանրապետությունից 11 հազար կմ հեռավորության վրա:

Ծավալի մեծ տարբերությամբ երկրորդ տեղում է «հարեան» Ռումինիան(8.5 տոկոս), որտեղից նշված ժամանակում շաքարավազ է ներկրվել 765 դոլար մեկ տոննայի դիմաց մաքսային արժեքով: Ռումինիայում նախապես շաքարավազն արտադրվում էր տեղական շաքարեղեգի հումքից, սակայն վերջին ժամանակներում լայնորեն տարածվել է համեմատաբար էժան բրազիլական հումքը: Այս մթերքի մյուս քանակությունը Հայաստանը ներկրում է մի շարք այլ երկրներից:

Չնայած սեփական ծավալուն արտադրությանը(անցյալ տարի ավելի քան 5 մլն տոննա)՝ մեր հյուսիսային հարեանն, այնուամենայնիվ, ստիպված էր շաքար ներկրել, ինչպես նաև հումք արտադրության համար: Այսպես, վերջին երեք տարիներին Ռուսաստանը ներկրել է ավելի քան 5,2 մլն տոննա շաքարավազ՝ մոտ 3,4 մլրդ դոլար արժողությամբ՝ ընդ որում, նույնպես առավելապես Բրազիլիայից(70 տոկոս):

Սակայն շաքարավազի(ինչպես նաև մի շարք այլ մթերքների) ռեսուրսների իրավիճակը Ռուսաստանում մեր համեմատ արմատապես այլ է: Այս երկրում ՄՄ սակագներում արտացոլված հովանավորչությունը արտահայտվում է բարձր մաքսային տուրքերով տեղական արտադրանքի մրցունակության ապահովման նպատակներով:

Նախ նշենք, որ անգամ ՄՄ ներսում համագործակցությունը իդեակալական չէ: Ամեն անդամ երկիր, բնականաբար, փորձում է պաշտպանել իր շահերը: Ասենք, նույն շաքարավազի հարցում լուրջ խնդիրներ էին ծագել Բելոռուսի ու Ռուսաստանի միջև: Ռուսաստանը երկարատև դադարից հետո երկու տարի առաջ նույնպես շաքարավազ արտահանեց: Սակայն ԻԿԱՌ փորձագետների գնահատմամբ ընթացող տարում նա պետք է կտրուկ ավելացնի հումքի ներկրման ծավալները: Նշենք, որ նոյեմբերի սկզբի դրությամբ Ռուսաստանում շաքարեղեգի բերքը կազմել է 34,2 մլն տոննա՝ նախորդ տարվա 38,4-ի համեմատ: Ի վերջո, այս երկրում շաքարավազի հետ կապված խնդիրները բավական են...

ՄՄ-ում կիրառվում է երրորդ երկրներից շաքարեղեգի ներմուծման հատուկ մաքսատուրք(այսինքն յուրաքանչյուր միավորի դիմաց), I կիսամյակում 250 դոլարի չափով շաքարավազի եւ 270 դոլարի չափով երկրորդ կիսամյակում: Ըստ այսպես կոչված «սպիտակ» շաքարի, այսինքն, արտադրանքը, որը ներկայացված է մեր մանրածախ ցանցում, մաքսային տուրքը կազմում է 340 դոլար տոննայի դիմաց: Այդ գործիչները հայտնվում են «Մաքսային միության միասնական մաքսային սակագնի» դեպքում, որը գործողության մեջ դրվեց 2010 թ. սկզբից:

Հայաստանում է շաքարի դեպքում գործում է աղվալորային (այսինքն մաքսային արժեքի տոկոսներ) 10

տոկոս չափով տուրքը: Ըստ հաշվարկների, այս տարվա I կիսամյակում միջին վճարը կազմել է մոտ 57 դոլար մեկ տոննա շաքարի դիմաց, որը ցածր է ՄՄ տուրքերից ինչպես «սպիտակ» շաքարավազի, այնպես էլ շաքարի ճակնդեղի դեպքում:

Հասկանալի է, որ ՄՄ Հայաստանի անդամակցությունից հետո «մեր» տուրքերը կվերանայվեն: Պարզ է նաև, որ ՄՄ բարձր դրույքների կիրառումը կհանգնեցնի Հայաստան ներկրվող ապրանքների կտրուկ թանկացման, այդ թվում սննդամթերքի:

«Զգայուն ապրանքների ցանկը, որի վերաբերյալ ներմուծման մաքսային տուրքի որոշումը Մաքսային միության հանձնաժողովն ընդունում է կոնսենսուսով», ներառում է գրեթե բոլոր ապրանքները: Խնդիրն այն է, որ այդ սակագներն արդեն հաստատվել են ՄՄ ներկա անդամների կողմից ու դժվար թե Հայաստանի համար նվազեցվեն...

Նշենք, որ ՄՄ սակագնային քվոտաներում(որոնց շնորհիվ կարելի է որոշակի ժամանակահատվածում որոշակի քանակությամբ ապրանքներ ներմուծել համեմատաբար ցածր տուրքերով), կիրառվում են միայն հումք հանդիսացող որոշ գյուղատնտեսական արտադրանքների դեպքում: Վերամշակված արտադրանքի դեպքում այդ զիջումները չեն գործում:

Այժմ հաստատվում է, որ ներկրվող ռուսական բնական գազի գրոյական սակագնի կիրառման դեպքում դրա վերջին թանկացումը Հայաստանի համար փոխհատուցվում է: Սակայն, ոչ ոք չի համարձակվի կանխատեսել, թե արդյոք նույնը կլինի գինը ռուսական գազի դեպքում, թե առաջիկայում եւս հերթական անգամ գինը կբարձրանա...

Մերառ Գրիգորյան

Ռազմական փորձագետ. Բոննի փորձագետները պարզել են, որ Հաստատանը սպառազինության մակարդակով չի գիջում Ադրբեջանին



Նոյեմբեր 12, 2013

Բոննի կենտրոնի զեկույցը կարելի է գնահատել որպես խոստովանություն, որ Հայաստանը սպառազինության մակարդակով հետ չի մնում Ադրբեջանից: Այս մասին հայտարարել է ռազմական փորձագետ Արկադի

Գրիգորյանը, NEWS.am-ի թղթակից խնդրանքով մեկնաբանելով Բոննի կոնվերսիայի միջազգային կենտրոնի ամենամյա սպառազինության գլոբալ ինդեքսը:

Ռազմական փորձագետը ընդգծել է, որ առայժմ լիովին հասկանալի չէ, թե ինչպես է հաշվարկն իրաանացվել եւ թե ինչ թվյալների վրա հիմնվելով են արվում զեկույցի եզրակացությունները, սակայն դրանից պարզ երևում է, որ ադրբեջանական կողմի անվերջ խոսակցություններն այն մասին, որ «Ադրբեջանի ռազմական բյուջեն գերազանցում է Հայաստանի բյուջեն», դատարկ են:

Միեւնույն ժամանակ Արկադի Գրիգորյանը կասկածամտությամբ է վերաբերում այն պնդումներին, որ Հայաստանը ռազմականացման մակարդակով չորրորդ հորիզոնականում է: «Դրան այնքան էլ չեմ հավատում՝ հաշվի առնելով այնպիսի երկրների առկայությունը, ինչպիսին է Հյուսիսային Կորեան», - ընդգծել է ռազմական փորձագետը:

2013-ի համար ներկայացված սպառազինման գլոբալ ինդեքսի տվյալների համաձայն՝ 2012-ին Հայաստանը զբաղեցրել է չորրորդ հորիզոնականը՝ 724.12 ցուցանիշով: Նախորդ տարվա տվյալներով՝ Հայաստանը հինգերորդ հորիզոնականում էր: Աշխարհի ամենառազմականացված երկիրը՝ սկսած 2007-ից, շարունակում է հանդիսանալ Բուրայելը: Այս տարվա վարկանիշում Ադրբեջանը ութերորդ հորիզոնականում է:

Արցախ

Փայլակ Հայրապետյանը ԼՂ իշխանություններին Արցախում ոսկու եւ նավթի առկայության մասին կարելու փաստաթղթեր է ներկայացրել



Նոյեմբեր 12, 2013

Մնանկացման եզրին կանգնած գործարար Փայլակ Հայրապետյանը Լեռնային Ղարաբաղի վարչապետին կարելու փաստաթղթեր է փոխանցել՝ ԼՂ տարածքում ոսկու, նավթի եւ այլ հանքերի առկայության մասին եւ խնդրել նրանց թույլտվությունը տարածքում ուսումնասիրություն սկսելու համար: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում ասաց գործարար Փայլակ Հայրապետյանը եւ ավելացրեց, որ այդ փաստաթղթի վրա լավագույն մասնագետներն են

աշխատել: «Սակայն արդեն մի քանի ամիս է՝ ոչ մի պատասխան: Նրանք ընդամենը պետք է պատասխանեն ես իրավունք ունեմ այդ գործը անելու, թե ոչ: Ես այստեղի գործերով դեռ խառն եմ, որ մի քիչ կարգավորվի, անձամբ եմ գնալու եւ փորձելու ուսումնասիրել ԼՂ ընդերքը»,- ասաց Փայլակ Հայրապետյանը:

Ավելի վաղ տեղկացրել էինք, որ Փայլակ Հայրապետյանի՝ Ղարաբաղում գտած եւ Ուկրաինա ուղարկված ոսկու լաբորատոր ստուգումների արդյունքներով ոսկի հայտնաբերվել էր, սակայն այն ստանալու համար ծախսերը ավելի շատ կլինեին, քան արդյունքը:

**«Հայերը կռվում էին խիզախորեն և հուժկու, այնինչ ազերիները վախենում էին նրանց դեմ մերձամարտի ելնել».
չեչեն նախկին գրոհային՝
ղարաբաղյան պատերազմի մասին**

Ներկայացնում ենք չեչեն նախկին գրոհային Ալի Համզատովի՝ 2010 թ.-ին տված հարցազրույցը կրճատումներով:

«Ես ակկիացի եմ (չեչեն): Ծնվել եմ 1970 թ.-ին Գրոզնիում: 1991 թ.-ից մասնակցել եմ իմ ժողովրդի ազատագրական պայքարին: 1993 թ.-ին մոտ երկու ամիս չեչեն ուղղահավաստների խմբի հետ կռվել եմ Ղարաբաղում հայերի դեմ: Ադրբեջանցի-թուրք «եղբայրների» հետ կռվել ենք «անհավատների» դեմ: Մեր ամիրի հետ պայմանավորվել էինք, որ յուրաքանչյուր սպանված հայի դիմաց պետք է ստանանք 200 դոլար:



21 Նոյեմբերի 2013 - 15:02

1993 թ.-ի հունիսին մեզ՝ մոտ 120 շահիդների, ուղարկեցին հայկական Ազդերա (Մարտակերտ) գյուղի շրջան, ուր մենք ամրացանք թիվ 203 բարձունքում՝ անտառապատ լանջերի մոտ: Ճիշտն ասած, հայերին «բազարներ» էինք անվանում, ես հայերի մի քանի անգամ տեսել եմ Գրոզնիում՝ կենտրոնական շուկայում: Ճիշտն ասած, ատում էի նրանց, ինչպես ռուսներին: Մենք՝ 60-70 հոգով, նրանց (հայերի) հետ առաջին անգամ ընդհարվեցինք հաջորդ գիշեր, երբ նրանք փորձեցին

թիկունքից մտնել մեր ու թալիշների միջև: Թշնամու կրակը ճնշվեց:

Այդպիսի տոկունություն և խիզախություն չէինք սպասում նրանցից: Հայերը սկզբունքորեն գերի չէին հանձնվում, հարձակվում էին գիշերները՝ առանց անկանոն կրակոցների: Մենք այդ գրոհները կնքեցինք «տարօրինակ», քանի որ ֆիդայիները, ինչպես իրենք էին իրենց կոչում, բարոյական բարձր պատրաստվածություն ունեին, հմտորեն քողարկվում էին, սիրում էին գրոհել անսպասելի: Դա սարսափի էր մատնում թուրք «եղբայրներին», որոնք մի քանի զոհից հետո անկանոն փախչում էին: Ազերիների երկու գորամաս փոխարինվեց դասալքության և իրար վրա կրակելու հետևանքով: Հայերը ճիշտ էին ասում. ամիր Ասլանբեկը վստահ էր, որ նրանք վաղ թե ուշ դուրս են մղելու ազերիներին: Ապշեցուցիչ է... : Մենք, թալիշներն ու մյուս կովկասցիները կռվում էինք Կովկասի մեկ այլ ժողովրդի դեմ, երբ թուրքերը փախչում ու չէին մասնակցում կռիվներին: Հայերը ուժեղ ու համարձակ մարտիկներ են, ոչ ռուսների ու ազերիների նման: Հիշում եմ՝ լեզգիները նրանց (ադրբեջանցիներին) անվանում էին ազերոչխարներ ստախտության և վախկոտության համար:

Ես վստահ եմ, որ այն ժամանակ մենք սխալ ընտրություն կատարեցինք. կովկասցին չպետք է կռվի կովկասցու դեմ՝ անկախ դավանած կրոնից: Հայերը չէին թալանում, այնինչ թուրքերը կռվում էին միայն դրա համար, հայերը կռվում էին խիզախորեն և հուժկու, այնինչ ազերիները վախենում էին նրանց դեմ մերձամարտի ելնել և օրերով սպասում էին օդուժի հարվածներին: Վերջում, երբ գնում էինք Ղարաբաղից, ոչ ոք ազերիներից փող չստացավ, իբր դուք վատ եք կռվել, հետո ինչ, որ այդքան անհավատների եք սպանել: Մենք զայրացանք, սակայն ամիրը՝ իմաստուն մարդ, հանգստացրեց մեզ: Հետո Իչկերիա գալով իմացանք, որ գերագույն հրամանատար ամիր Բասանը նույնպես կռվել է Ղարաբաղում: Ղարաբաղից հետո լիովին փոխվել էր բոլորիս վերաբերմունքը ոչ միայն հայերի, այլ նաև թուրք-ազերիների նկատմամբ»:

Հայերեն երգեր կատարող թուրք երգչուհին հայտարարել է, որ բոլոր հայերն իր բարեկամներն են

Նոյեմբեր 05, 2013

Թուրք հայտնի երգչուհի Մեզեն Աքսուն հերթական համերգի ժամանակ հայտարարել է, որ բոլոր հայերն իր բարեկամներն են:

Թուրքական Mansettv.com-ի փոխանցմամբ՝ թուրք հայտնի երգչուհի Մեզեն Աքսուն համերգի ժամանակ հանդիսատեսի հետ կիսվել է իր սիրո պատմությամբ եւ հիշել իր սիրեցյալ հայազգի Օնտ Թունչին՝ (Հովաննես Թունջբոյաջյան՝ Արտո Թունջբոյաջյանի եղբայր-խմբ) մեկ անգամ եւս հարգելով նրա հիշատակը:

Սեզեն Աքսուն, դիմելով հանդիսատեսին, ասել է. «Գիտե՞ք, ես 10 տարի Օնոյի հարսն եմ եղել: Այդ պատճառով աշխարհի բոլոր հայերն իմ բարեկամներն են»: Այս խոսքերից հետո դահլիճը պայթել է բուռն ծափահարություններից:

Նշենք, որ Օնո Թունչը 1996-ի հունվարի 14-ին մասնավոր օդանավով Բուրսայից Յալովա վերադառնալու ժամանակ վթարի էր ենթարկվել եւ գոհվել:

Սեզեն Աքսուն իր երգացանկում ունի բազմաթիվ հայկական երգեր եւ շատ անգամ կատարել է դրանք տարբեր բեմերում:

Ներկայացնում ենք Սեզեն Աքսունի կատարմամբ հայերեն երգերը:

Արեւմտյան Հայաստան

ԱՐԵՎՄՏԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ
(ԽՈՐՀՂԱՄԱՐՆԻ)



ՁԵՖԱԿՈՐՄԱՆ,
ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ
ՑԱՏՈՒԿ
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՈՉԱԿԱԳԻՐ

Արևմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձևավորման մասին

Փարիզ, Ֆրանսիա, 24 մայիսի, 2013 թ.

Հարգելի՛ հայրենակիցներ

Արևմտյան Հայաստանի Ազգային խորհուրդը, Արևմտյան Հայաստանի վտարանդի կառավարությունը և Արևմտյան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձևավորող հատուկ հանձնաժողովը, ստանձնելով Արևմտյան Հայաստանի պետական համակարգերի կազմավորման ու ստեղծման, հայերի գոյության ու ինքնության պահպանման, Արևմտյան Հայաստանի տնտեսության վերականգնման ու վերաշինության պատասխանատվությունը,

Հայտարարում են՝

- Ստեղծել Արևմտյան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան), որն իրականացնելու է հայության ուժերի համախմբումը:
- Հենքային համարել Հայկական հարցի՝ Հայոց պահանջատիրության լուծման խնդրում ազգային միասնությունը և հայոց անժամանցելի իրավունքը:
- Ընդունել մեկ բանաձև. հայ ժողովուրդը պետք է ապրի ինքնաբավ, իսկ ապագայում մեկ միասնական և անկախ Հայոց պետության կազմում:

Առաջնորդվում են՝

ա) Արևմտյան Հայաստանի հայերի Ազգային խորհրդի պաշտոնական հայտարարությամբ (ընդունված՝ 2004 թվականի դեկտեմբերի 17-ին) և «Արևմտյան Հայաստանի հայերի իրավունքների մասին» հռչակագրով (ընդունված՝ 2007 թվականի հունվարի 20-ին):

բ) Արևմտյան Հայաստանի վտարանդի կառավարության ստեղծման (ընդունված՝ 2011 թվականի փետրվարի 4-ին) և Արևմտյան Հայաստանի պետական համակարգի մասին որոշումներով (ընդունված՝ 2011 թվականի մարտի 2-ին):

գ) 2012 թվականի նոյեմբերի 30-ի Արևմտյան Հայաստանի հայերի՝ Արևմտյան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձևավորելու մասին 5-րդ վեհաժողովի որոշմամբ:

Հռչակում են, որ՝

Նկատի առնելով այն փաստը, որ հակառակ մարդկային բարոյականության և ցանկացած իրավունքի՝ ճանաչելու Հայոց իրավունքները բնօրրան հայրենիքի նկատմամբ, Թուրքիայի իրարիաջորդ կառավարություններ՝ սուլթանական, երիտթուրքական և քեմալական, 1894-1923 թթ. իրականացրել են Հայերի ցեղասպանություն և բռնագաղթ, որի միջոցով աննախադեպ փոփոխել են ազգագրական պատկերը տարածաշրջանում, իսկ հետևանքում կրճատելով հայերի թիվը բռնագաղթված տարածքներում, որպես «հավելվածար» իրենց հանցագործությունների խախտել են ազգությունների միջև բնականոն հարաբերակցությունը՝ Արևմտյան Հայաստանում, և նկատի առնելով վերոհիշյալ ողջ իրողությունը հռչակում են, որ՝ Արևմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) իրավասությունը տարածվում է ինչպես Արևմտյան Հայաստան պետության քաղաքացիների, այնպես էլ Արևմտյան Հայաստանի բռնագրավված երկրամասի՝ Արևմտյան Հայաստանի իրավական (de jure) և փաստական (de facto) տարածքների վրա՝ նկատի ունենալով՝

ա) Հայաստան - Թուրքիա սահմանագատումը՝ համաձայն ԱՄՆ-ի 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի (22 նոյեմբերի, 1920 թ.):

բ) Պատմական Հայաստանի, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանի և Գիլիկյան Հայաստանի անկախությունը՝ համաձայն ՄԱԿ-ի «Գաղութային երկրներին և ժողովուրդներին անհապաղ անկախություն տրամադրելու մասին» հռչակագրի (14 դեկտեմբերի, 1960 թ.):

գ) Որպես բնիկ ժողովուրդ՝ Արևմտյան Հայաստանի հայերի ունեցած պատմական, ծագումնաբանական, մշակութային, քաղաքակրթական, պետականաստեղծ անժամկետ և անժխտելի իրավունքները՝ համաձայն ՄԱԿ-ի «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագրի (13 սեպտեմբերի, 2007 թ.):

Վերոհիշյալ իրավասությունը տարածվում է Արևմտյան Հայաստանի հետևյալ նահանգների և տարածքների վրա՝

1. Վան,
2. Բիթլիս,
3. Էրզրում (Կարին),
4. Տրապիզոն (Համշեն),
5. Միվաս (Մեքասոփա),
6. Դիարբեքիր (Տիգրանակերտ),
7. Խարփուշ (Խարբերդ),
8. Գիլիկիա (այդ թվում՝ Կեսարիա, Մարաշ, Ադանա, Ջլեթուն, Այնթափ, Անտիոք),
9. Կարս (և Սուրմալու),
10. Ջավախք,
11. Նախիջևան:

Առաջնորդվելով վերը նշված փաստաթղթերով և դրույթներով՝ Արևմտյան Հայաստանի Ազգային խորհուրդը, Արևմտյան Հայաստանի վտարանդի կառավարությունը և Արևմտյան

Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձևավորող հատուկ հանձնաժողովը

Հայտարարում են, որ՝

ստեղծվում է Արևմտյան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձևավորող Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ), որը լիազորված է կազմակերպելու և անցկացնելու ընտրական ողջ գործընթացը:

(Տե՛ս Արևմտյան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձևավորող Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքը՝ <http://www.western-armenia-election.org>):

Քաղաքացիների գրանցումը

Արևմտյան Հայաստանի քաղաքացիներ են բոլոր այն անձինք, ովքեր կարող են հիմնավորել թե՛ իրենց տարագրյալ լինելը՝ Հայրենիքից (Արևմտյան Հայաստանից), թե՛ իրենց ծագումը՝ նույնիսկ մի քանի սերունդ վաղեմությամբ (ուղիղ ժառանգական կապով):

1) Արևմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ընտրություններին մասնակցելու ցանկություն հայտնած Արևմտյան Հայաստանի քաղաքացիների, ինչպես նաև հայրենակցական ու հայրենասիրական հասարակական կազմակերպությունների և միությունների գրանցման գործընթացն իրականացվում է՝ 2013 թ. մայիսի 24-ից մինչև դեկտեմբերի 1-ը:

2) Ընտրություններին մասնակցելու ցանկություն հայտնած Արևմտյան Հայաստանի քաղաքացիները գրանցվում են հետևյալ կայքում՝

<http://www.western-armenia-election.org/votes/Enregistrement2013-fr-arm.php>

Թեկնածուների գրանցումը

1) 2013 թ. հունիսի 1-ից սկսվում է Արևմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորության թեկնածուի կողմից իրականացվող ստորագրահավաքը՝ հատուկ հաստատված ձևաթղթերի միջոցով:

2) Արևմտյան Հայաստանի Ազգային ժողովը (Խորհրդարանը) բաղկացած է Արևմտյան Հայաստանի քաղաքացիներից: Արևմտյան Հայաստանի քաղաքացու անձնագիր ունենալը պարտադիր է պատգամավորության թեկնածուի համար:

3) Թեկնածուների գրանցումն իրականացվում է 2013 թ. հոկտեմբերի 1-ից ժամը 08:00, մինչև հոկտեմբերի 22-ը՝ ժամը 24:00:

4) Ընտրություններն անցկացվում են 2013 թ. նոյեմբերի 22-ից ժամը 08:00, մինչև դեկտեմբերի 1-ը՝ ժամը 00:00 (Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքի միջոցով կամ գրավոր):

5) Ընտրությունների արդյունքները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատվում և հրապարակվում են 2013 թ. դեկտեմբերի 17-ին:

6) Առաջադրվելու համար թեկնածուն պետք է ներկայացնի Արևմտյան Հայաստանի քաղաքացիների նվազագույնը 100 ստորագրություն:

7) Թեկնածուն պետք է ներկայացնի ինքնակենսագրություն և գործունեության համառոտ ծրագիր:

8) Արևմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորության թեկնածուները գրանցվում են հետևյալ կայքում՝

<http://www.western-armenia-election.org/votes/Candidature2013-fr-arm-en-ru.php>

http://www.western-armenia-election.org/Consultation-Electorale/2013/Teqnadzouneri_timoume-2013.pdf

http://www.western-armenia-election.org/Consultation-Electorale/2013/Requete_de_candidature-2013.pdf

Հաստատում են, որ՝

Արևմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորության թեկնածուները, որոնք պաշտոնապես ընդունում են Արևմտյան Հայաստանի Ազգային խորհրդի և Արևմտյան Հայաստանի վտարանդի կառավարության Հռչակագիրը և հիմնադիր փաստաթղթերը, կարող են ինքնաառաջադրվել և կամ ներկայացվել հայրենակցական ու հայրենասիրական հասարակական կազմակերպությունների և միությունների, Արևմտյան Հայաստանի Ազգային խորհրդի ու Արևմտյան Հայաստանի վտարանդի կառավարության կողմից:

Արևմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձևավորման հիմնական մեխանիզմները, այդ թվում՝ կանոնակարգի նախագիծը, որով հաստատվում է Արևմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) առաջին նստաշրջանի գումարման ժամկետը, պատգամավորների քանակը, հայրենակցական ու հայրենասիրական հասարակական կազմակերպությունների և միությունների ներգրավման օրինակագրը հաստատված Արևմտյան Հայաստանի Ազգային խորհրդի կողմից:

Կոչ են անում համայն հայությանը՝

պաշտպանելու ու հաստատելու իր անսակարկելի և անժամանցելի իրավունքները, որի կարևորագույն գործողություններից մեկը Արևմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձևավորումն է, ակտիվորեն մասնակցելու այս ընտրություններին՝ Արևմտյան Հայաստանի քաղաքացիություն ձեռք բերելու և դրա ընձեռած բացառիկ հնարավորության շրջանակներում:

Արևմտյան Հայաստանի Ազգային խորհրդի նախագահ՝

Արմենակ Աբրահամյան

Արևմտյան Հայաստանի վտարանդի կառավարության վարչապետ՝

Տիգրան Փաշարեզյան

Արևմտյան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձևավորող

հատուկ հանձնաժողովի պատասխանատու՝

Արմեն Տեր-Սարգսյան

Արևմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի

Արևմտեան Հայաստանի Ազգային Խորհրդի
Ներկայացուցչություն, Ֆրանսա

Représentation en France du Conseil National d'Arménie Occidentale

BP 61

92224 BAGNEUX CEDEX – FRANCE

stat.gov.wa@haybachdban.org

<http://www.western-armenia-election.org/votes/Candidature2013-fr-arm-en-ru.php>

Դինքի սպանության մեղավորները դարձել են նախարար ու պատգամավոր. թուրք կուսակցապետ



Նոյեմբեր 06, 2013

Թուրքիայի գլխավոր ընդհիմադիր «Ժողովրդահանրապետական» կուսակցության առաջնորդ Քեմալ Քըլըչդարողլուն ասել է, թե Հրանտ Դինքի սպանության մեջ մեղավորների պաշտոնները բարձրացվել են:

Թուրքական Taraf-ի հետ հարցազրույցի ժամանակ «Ժողովրդահանրապետական» կուսակցության առաջնորդ Քեմալ Քըլըչդարողլուն, անդրադառնալով Հրանտ Դինքի սպանության գործով դատավարությանը, ասել է, թե իշխանություններն այս գործին բավականաչափ հետամուտ չեն:

«Սպանության մեջ պատասխանատուների պաշտոնները բարձրացվեցին: Որոշները դարձան պատգամավոր եւ նախարար: Սա, իրոք, 21-րդ դարի Թուրքիային հարիր չէր: Մարդուն փողոցի մեջտեղում սպանում են, որի սկիզբը դրվել էր Տրապիզոնում: Ամբողջ ընթացքից տեղյակ էին, գիտեին, որ սպանելու են Դինքին, բայց միջոցներ չձեռնարկեցին կանխելու համար:

Սպանությունը տեղի ունենալուց հետո ամբողջ մեղքը փորձում են զցել մի քանի հոգու վրա եւ փակել գործը: Մենք դա չենք ընդունում: Դինքը մեր մարդն էր: Լրագրող էր, մտավորական: Անհրաժեշտ է, որ ժողովրդավարության եւ իրավունքի պաշտպան պետությունը մեղավորներին հայտնաբերի: Եթե չի հայտնաբերում, ուրեմն ինքը հանցակից է: Իշխող կուսակցությունն այդ սպանության հանցակից է», - ասել է Քըլըչդարողլուն:

Թուրքիայում իսլամացած հայերին ամենից շատ տանջում է թաքցրած ցավը

Նոյեմբեր 16, 2013

Ստամբուլում կայացած Իսլամացած հայերին նվիրված կոնֆերանսին հայերը եւս հրավեր են ստացել եւ կոնֆերանսին ներկայացրել են զեկուցումներ, որոնք վերաբերվել են բռնի իսլամացած կանանց եւ հայությանը: Այս մասին այսօր՝ նոյեմբերի 16-ին հրավիրված ասուլիսին ասաց Հնագիտության եւ

ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, համշենագետ Սերգեյ Վարդանյանը խոսելով Ստամբուլում կայացած Իսլամացած հայերին նվիրված կոնֆերանսի ու իսլամացած հայերի հիմնախնդիրների մասին:



Նա ասաց, որ կոնֆերանսը տեղի է ունցել նոյեմբերի 2-4-ը եւ անվտանգությունը կազմակերպված է եղել բարձր մակարդակով: Մասնակցել են հինգ երկրների գիտնականներ եւ լսել են 26 զեկուցում: Հայաստանից մասնակցել են չորս հոգի: «Իմ զեկուցումը եղեռնի գոհերի եւ վկաների մասին էր», - ասաց Սերգեյ Վարդանյանը: Խոսելով Իսլամացած հայերի ներկայիս խնդիրների մասին՝ նա պատմեց, որ նրանք գրուցելիս առաջինը խոսում են իրենց մեջ պահած գաղտնի ցավի մասին: «Չեն ցանկացել իրենց ընտանիքի ծագման մասին խոսել: Դա վտանգավոր է եղել, ինչը ցավ է: Վերջին մի քանի տարվա ազատության շունչը թույլ տվեց որոշ չափով բարձրաձայնել իրենց ողբերգության, թաքցրած ցավի մասին: Վշտի դեպքում ասում են պատմի, խոսի այդ մասին, որ թեթեւանա: Հիմա նոր-նոր սկսել են խոսել իրենց ցավի մասին: Մարդկանց երեսին մինչեւ հիմա էլ այդ դեպքում ասում են, թե դու գայավուր ես, երկրորդ տեսակի թուրք ես, առաջին տեսակի թուրք չես», - պատմեց Սերգեյ Վարդանյանը եւ ավելացրեց, որ դեռ վիճակագրություն չկա, թե քանի ծպտյալ հայ է ապրում այնտեղ:

Հայկազուն Ավրոյան. Թուրքիայում մոտ երկու միլիոն ծպտյալ հայեր կան

Նոյեմբեր 16, 2013

Թուրքիայում իսլամացած հայերի խնդիրը այսօր դարձել է հանրության համար լուրջ քաղաքական խնդիր: Այս մասին նոյեմբերի 16-ին հրավիրված ասուլիսին ասաց «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն» գիտահետազոտական հիմնադրամի տնօրեն Հայկազուն Ավրոյանը՝ խոսելով իսլամացած հայերի հիմնախնդիրների մասին:

Նրա խոսքով, հարցի նկատմամբ կա մի քանի տեսակետ՝ իշխանության, ազգայնամոլների՝ գործ գայերի եւ նրանց մամուլի եւ այս խնդիրը լավագույնս

գիտակցող եւ խնդրին ճիշտ լուծում տվող մտավորականության, որոնք պահանջում են այս հարցը պարզել: Հայկազուն Ալվրցյանը նաեւ նշեց, որ իսլամացած հայերը մեծ խումբ են, որոնց մեջ կա երկու խումբ: Մի խումբը հաշտվել է եւ չի ցանկանում հիշել անցյալը՝ վախ կա, ցեղասպանություն են տեսել, ունեցվածքի, կյանքի վտանգ: Իսկ մյուս խմբին կոչում են ծպտյալ հայեր՝ ներքին կյանքում պահել են լեզուն, ավանդույթները, ամուսնությունները, կրոնական հակումները եւ այսօր ցանկանում են բացահայտ խոսել իրենց ազգային ինքնության մասին:



Բանախոսը նշեց, որ թվում է, թե քիչ բան գիտենք ծպտյալ եւ իսլամացած հայերի մասին, բայց այնպես չէ, որ ոչինչ չգիտենք: «Բավականին շատ հետազոտություններ են կատարվում եւ որոշ տվյալներ մեզ արդեն հայտնի են: Մենք ունենք ոչ օղից վերցված տեղեկություններ, որը այսօր թվային տեսք էլ է ստանում: Այդ տվյալներով՝ մենք ունենք մոտավորապես իսլամահայության,՝ համընդհանրապես էլ գումարած, երեք միլիոնից ավել, մոտ չորս միլիոն հայեր: Դրանցից մեկուկես երկու միլիոնը ծպտյալ հայեր են: Մա ճշմարտությունից շատ հեռու լինել չի կարող», - ասաց Հայկազուն Ալվրցյանը:

Թուրքիայում մոր հայ լինելը հայտնաձ լրագրողը ենթարկվել է հարազատների սպառնալիքներին

Հոկտեմբեր 08, 2013

Թուրքիայի ժամանակակից լրագրողների միության նախագահ Ահմեդ Աբաքայը հայտնել է, թե նույնիսկ իր հարազատներից է սպառնալիքներ ստացել, երբ մամուլով ասել է, որ իր մայրն իր ամբողջ կյանքում թաքցրել է հայ լինելը եւ դրա մասին ինքը գիրք է գրել: Թուրքական Radikal-ի փոխանցմամբ գրող-լրագրող Ահմեդ Աբաքայն իր մոր մասին գրած «Հոշանայի վերջին խոսքը» գրքի շնորհանդեսի ժամանակ պատմել է, որ երբ ինքը մամուլով հայտնեց, որ գիրք է գրել 82 տարեկանում իր հայ լինելը բացահայտած մոր մասին, ենթարկվել է նույնիսկ իր հարազատների սպառնալիքներին: «Երբ այսօր իմ բարեկամներն ինձ նման բաներ են ասում,

ուրեմն բնական է, որ մայրս այդքան տարիներ վախեցել է հայտնել իր հայ լինելը», - նշել է Աբաքայը՝ շեշտելով, թե իր մայրը խնդրել էր, որ մինչ իր մահը ոչ-ոքի չասի իր հայ լինելու մասին:



Ահմեդ Աբաքայը պատմել է, որ գիրքը գրելուց շատ զգացմունքային պահեր է ապրել եւ որոշ հատվածներ գրելուց երկար արտասվել է:

Նշենք, որ Թուրքիայի ժամանակակից լրագրողների միության նախագահ Ահմեդ Աբաքայի «Հոշանայի վերջին խոսքը» գրքի նախաբանում գրված է հետևյալը.

«Մանկուց ի վեր այլեիական մշակույթով մեծացած մի կին, իր հայ լինելը 82 տարի շարունակ իր ընտանիքից, երեխաներից, թոռներից կթացքնի: Մի գյուղ 82 տարի եւ այսօր կլռի:»

Ինչու է, մի օր, իր ամենակրտսեր որդուն՝ ինձ, պատմեց իրականությունն իր մանրամասներով: Հաջորդ օրը վթարի հետեւանքով կորցրեց գիտակցությունը, որից հետո մահացավ: Գրելով Հոշանայի այս գաղտնիքը, անհրաժեշտ համարեցի ներկայացնել նրա կյանքից մանրամասներ, որոնք ձգվել են մինչեւ իմ մանկություն եւ երիտասարդ տարիները:

Թուրքիայում հայ ընտանիքը բացառիկ պատմական լուսանկարների ցուցահանդես է բացել

Հոկտեմբեր 31, 2013

Թուրքիայի Ամասիա նահանգի Մերզիֆոնի շրջանում ապրող Արմեն Յուլակ Մարսոբյանը հայրենի քաղաքում ներկայացրել է իր նախնիների կողմից 1872-1923 թվականներին արված մոտ 600 լուսանկարները:

Թուրքական Bugun պարբերականի փոխանցմամբ՝ Ամասիայի հայերից Արմեն Յուլակ Մարսոբյանն իրենց ընտանեկան արխիվից հանել է իր 1872-ից 1923 թվականներին Մըվազում, Մերզիֆոնում, Մամսունում, Քոնիայում եւ Ամասիայում արված մոտ 600 լուսանկարներ, որոնք ունեն բացառիկ պատմական նշանակություն:

Պատմական լուսանկարների ցուցահանդեսի բացումը տեղի է ունեցել Մերզիֆոնի քաղաքապետի և բազմաթիվ քաղաքացիների ակտիվ մասնակցությամբ:



Արմեն Ցոլակ Մարտոբյանը նշել է, թե շատ երջանիկ է, որ իր ընտանիքին պատկանող լուսանկարները ցուցադրվում են հենց նրանց ապրած հողերում:



Թուրքիայի խորհրդարանում կարող են հայեր լինել. քուրդ կուսակցապետ



Հոկտեմբեր 31, 2013

Հանդիպումների նպատակով ԱՄՆ-ում գտնվող Թուրքիայի քրդական «Խաղաղություն և ժողովրդավարություն» (BDP) կուսակցության նախագահ Մելահաթին Դեմիրթաշն անդրադարձել է Թուրքիայում նոր ձեւավորված Ժողովուրդների դեմոկրատական

(HDP) կուսակցությանը՝ շեշտելով, թե այն մեծ անելիք ունի Թուրքիայում:

Թուրքական CNNturk-ի փոխանցմամբ՝ BDP-ի նախագահ Մելահաթին Դեմիրթաշը Վաշինգտոնում հայտարարել է, թե նոր ստեղծված HDP-ի արդյունքում BDP-ն չի փակվելու, սակայն BDP-ն ընտրություններին կմասնակցի HDP-ի ցուցակներով:

Դեմիրթաշը շեշտել է, թե HDP-ն մասնակցելու է խորհրդարանական ընտրություններին՝ հատելով 10 տոկոս շեմը եւ խորհրդարան մտցնելով ամենաքիչը 70 պատգամավոր: Նա նշել է, թե այդ պատգամավորների մեջ կարող են լինել թե գլխաշորով պատգամավորներ, թե հայեր:

Նշենք, որ նորաստեղծ HDP-ի խորհրդի կազմի մեջ են ընդգրկվել հայ համայնքից Ստամբուլի Յեշիլքոյի հայկական դպրոցի տնօրեն Գարո Պայլանը, դիպրեքիբցի հայտնի հայ գրող Մկրտիչ Մարկոսյանը:

Թուրք կուսակցապետը, ում մայրը հայ է, պատասխանել է Հայոց ցեղասպանության հետ կապված հարցին



Նոյեմբեր 04, 2013

Թուրքիայի գլխավոր ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» (CHP) կուսակցության առաջնորդ Քեմալ Քըլլըզդարոլուն, ում մայրը ըստ պնդումների հայ է, թուրքական Taraf-ի հետ զրույցում պատասխանել է նաև Ցեղասպանության հետ կապված հարցին:

Թուրքական Taraf-ի լրագրողի հարցրել է Քեմալ Քըլլըզդարոլունին, թե ինչպես նա կմեկնաբաներ 1915 թվականին տեղի ունեցածը:

1915-ին այս հողերում հայ ժողովուրդ կար, սակայն հիմա չկա: Հայ ժողովրդի գլխին եկածը մեկնաբանելու համար ինչ որակում կտաք դրան:

1915-ին տեղի ունեցածը դիտում եմ որպես Օսմանյան պատմության դրամատիկ իրադարձություններից մեկը: Դե չտեսնելը անհնարին է: Բայց այդ խնդրում չենք հավատում, որ բավականաչափ աղբյուրներ եւ

արխիվներ են բացվել: Ոչ միայն օսմանյան, այլ նաև ռուսական եւ հայկական արխիվներն են անհրաժեշտ բացել:

Այսինքն, դրամատիկ էք ասում:

Անշուշտ, երբ նայում ենք այդ օրերին մարդկանց պայմաններին, ինչպես էին մի շրջանից մյուս շրջան ուղարկում, հազարավոր մարդիկ մահանում էին, կին, տղա, երեխա եւ այլք... Երբ նայում ես, հասկանում ես, որ դրամատիկ մի իրավիճակ է:

Մտնե՞նում է 2015-ը (Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը), որպես կուսակցություն ի՞նչ եք մտածում անել:

Եթե ուզում եք ճիշտը իմանալ, ասեմ, մեզ Թուրքիայի ԱԳՆ-ից ասել են, որ որոշ պատրաստություններ են տեսել: Որպես կուսակցություն, մեր տեսակետն այն է, որ այդ իրադարձությունները պետք է պատմաբանները օրյեկտիվ կերպով լուսաբանեն հասարակության համար: Այդ համատեքստում եթե բացվեն արխիվները, բոլոր մանրամասնությունները իմանալու հնարավորություն կլինի: Մենք էլ կիմանանք, հասարակությունն էլ կիմանա, պատմաբաններն էլ կիմանան:

Նշենք, որ 2 տարի առաջ, երբ Քեմալ Քըլլըզդարոլուն դարձավ կուսակցապետ, նրա հակառակորդները փորձում են նրա վարկանիշին խփել՝ վիրավորական ենթատեքստով հայտարարելով, թե նրա մայրը հայ է:

Մի առիթով թուրքական Milliyet-ի թղթակցի հետ զրույցում Քեմալ Քըլլըզդարոլուն նշել էր, թե հնարավոր է, որ իր մայրը հայ է: «Իմ ընտանիքի էթնիկ ինքության վերաբերյալ հարցաքննություն անելը հակասում է մարդու իրավունքներին: Մայրս կարող է եւ հայ է»,-ասել էր Քըլլըզդարոլուն:

Վանի Բերկրիի ջրվեժը ոչ-ոք այդպես շքեղ չէր տեսել



Նոյեմբեր 09, 2013

Տարվա տաք եղանակներին մշտապես Վան այցելող զբոսաշրջիկների ուշադրության կենտրոնում գտնվող Բերկրիի ջրվեժն իր գեղեցկությամբ ներկայացել է նաև գիշերով:

Թուրքական Turkiyegazetesi կայքի փոխանցմամբ՝ հայտնի լուսանկարիչ Ալի Բիսան Օզթուրքը Վանի Բերկրիի ջրվեժը գիշերով լուսանկարել է՝ ստանալով հրաշք կադր:

Լուսանկարիչն աշխատել է Canon 5D Mark 3 լուսանկարչական ապարատով: Նա հրաշք կադրը ստանալու համար գործի է անցել երեկոյան 19:30-ին եւ միայն 02:30-ից մինչեւ 03:30-ը ընկած մեկ ժամվա մեջ արել հիշյալ կադրը:

Canon 5D Mark 3-ի հատուկ հնարավորությունների շնորհիվ կարողացել է մեկ ժամ լուսանկարում անել, որի արդյունքում ստացված կադրում շատ պարզ տեսնում ենք աստղերի շարժը իրենց հետագծերով:

Նշենք, որ Բերկրիի ջրվեժը (ներկայում անվանվում է Մուրադիյե) գտնվում է Բերկրի գետի վրա, որն իր հերթին սկիզբ է առնում Թոնդրակ լեռից, հոսում Վասպուրականի լեռներին զուգահեռ, անցնելով 65 կմ տարածություն եւ թափվում Վանա լիճը: Բերկրիի ջրվեժը գտնվում է Վան քաղաքից 90 կմ հեռավորության վրա:

Վանի հայկական Սուրբ Բարդուղիմեոս եկեղեցին զբոսաշրջիկների ուշադրության կենտրոնում է



Յուկտեմբեր 12, 2013

Վանի Բաշքալեի շրջանում գտնվող եւ 1915-ից հետո լքված հայկական Սուրբ Բարդուղիմեոս եկեղեցին զինվորականների հեռանալուց հետո հայտնվել է Վան այցելող զբոսաշրջիկների ուշադրության կենտրոնում:

Թուրքական Paros.com կայքի փոխանցմամբ՝ Վանի Բաշքալեի շրջանի Ալբայրաք գյուղում գտնվող հայկական Սուրբ Բարդուղիմեոս եկեղեցին գրավում է շրջան այցելող օտարերկրյա զբոսաշրջիկներին:

Քանի որ, երկար տարիներ եկեղեցին եղել է զորամասի տարածքում եւ գյուղ զբոսաշրջիկներ չեն այցելել, այժմ գյուղացիները մեծ ոգևորությամբ են դիմավորում եկեղեցի այցելած բոլոր զբոսաշրջիկներին:

Նշվում է, որ զբոսաշրջիկներն այցելում են նաեւ հարեւանությամբ գտնվող Յանալ գյուղի Սուրբ Խաչ եկեղեցին:


Ավելի վաղ, Թուրքիայի Մշակույթի եւ տուրիզմի Վանի նահանգային վարչության պետ Մուգաֆեր Աքթուր նշել էր, թե 3-րդ դարում կառուցված եկեղեցին բացվել է այցելությունների համար, սակայն երկար տարիներ անխնամ թողնված եկեղեցին կարիք ունի

վերանորոգման: Նա շեշտել րէ, թե վերականգնման համար համապատասխան աշխատանքներ են ընթանում:

Միջազգային

ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչները կոչ են արել Սպիտակ տանը թուլլատրել հայ որբերի գորգի ցուցադրությունը

08/11/2013 tert.am



ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի մոտ 30 օրենսդիր, այդ թվում նաև արտաքին հարցերի հանձնաժողովի նախագահ Էդ Ռոյսը, հայամետ կոնգրեսականներ Ադամ Շիֆը, Ֆրենկ Փալոնեն, Բրեդ Շերմանը, կոչ են արել Սպիտակ տանը վերանայել որոշումն ու թույլ տալ Հայոց ցեղասպանությունից մազապուրծ եղած հայ որբերի ձեռքով գործված գորգի ցուցադրությունը: Այս մասին տեղեկացնում է asbarez.com-ը՝ ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբին (ANCA) հղումով:

Նամակի հեղինակները հիշեցրել են, որ մոտ 10 տարի շարունակ հայ-ամերիկյան կազմակերպությունները պարբերաբար խնդրել են Սպիտակ տանն ու պետության արտամենտին թույլ տալ գորգի հրապարակային ցուցադրությունը:

Հիշեցնենք, որ ավելի վաղ The Washington Post պարբերականն ու National Public Radio-ն հայտնել էին այն մասին, որ Սպիտակ տունը, նախապես ձեռքբերված պայմանավորվածության շրջանակներում, պետք է ժամանակավորապես Սմիթսոնյան թանգարանին հանձնել «որբերի գորգը», որպեսզի այն որոշ ժամանակ ցուցադրության հանվեր: Սակայն սեպտեմբերին, անհայտ պատճառներով, Սպիտակ տունը փոխել է իր որոշումը՝ հրաժարվելով տրամադրել նմուշը:

Public Radio International-ի հետ զրույցում Washington Post-ի մշակութային քննադատ Ֆիլիպ Քենիքոթն ընդգծել է, որ Սպիտակ տունը որևէ կերպ չի բացատրել իր մեծումը, սակայն, ամենայն հավանականությամբ, ԱՄՆ-ի կառավարությունը դա արել է՝ Թուրքիայի հետ հարաբերությունները չփչացնելու համար:

